

Ծխելու տնտեսական  
հետեւանքները

# ՀԱՅԱՍՏԱՆԻ

## The economic impact of smoking in Armenia

Current publication is prepared by the International Center for Human Development in the framework of the project under the World Health Organization's "Channel the Outrage" campaign. The publication includes the main aspects of economic consequences of smoking in Armenia.

Yerevan - 2004



Մարդկային զարգացման  
միջազգային կենտրոն

Երևան - 2004

# Ծինելու տնտեսական հետևանքները Հայաստանում

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն  
Երևան - 2004

Ծինելու տնտեսական հետևանքները Հայաստանում. Երևան, 2004  
Հեղինակ՝ Պարույր Ամիրջանյան  
® Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

**The Economic Impact of Smoking in Armenia.** Yerevan, 2004  
Authored by Paruyr Amirjanyan  
® International Center for Human Development

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                       |    |
|---------------------------------------|----|
| 1. Նախաբան.....                       | 4  |
| 2. Ծխելու տնտեսական հետևանքները ..... | 5  |
| 3. Հանրային առողջություն .....        | 7  |
| 4. Աշխատանքի շուկա .....              | 10 |
| Գյուղատնտեսություն .....              | 12 |
| Այլ ոլորտներ .....                    | 13 |
| 5. Արտաքին առևտուր .....              | 14 |
| 6. Պետական եկամուտներ .....           | 15 |
| 7. Աղքատություն .....                 | 19 |
| 8. Եզրակացություններ.....             | 24 |

## 1. Նախաբան


Հայաստանը կարելի է դասել այն երկրների շարքում, որտեղ ծխախոտամոլությունը հասել է հիրավի վտանգավոր չափերի: Վտանգավոր, որովհետև համաձայն գիտական ուսումնասիրությունների, 2030 թվականին ծխախոտը կհանդիսանա մահացությանը նպաստող ամենամեծ գործոնն աշխարհում՝ դառնալով տարեկան մոտ 10 մլն մահվան պատճառ<sup>1</sup>: Ամենահամեստ հաշվարկներով այժմ Հայաստանում տարեկան 3000 մարդ է մահանում՝ ծխախոտի վնասակար ազդեցության հետևանքով: Բոլոր տեսակի քաղցկեղներից մահացության առնվազն 48%-ը Հայաստանում կապված է եղել ծխելու հետ (հետագոտությունն իրականացված է 35-69 տարիքային խմբի տղամարդկանց շրջանում):

Համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) կողմից իրականացված ուսումնասիրության տվյալների Հայաստանում ծխում են տղամարդկանց 67.5% -ը և կանանց 3.1%-ը: Բայ տարիքային խմբերի ծխախոտի սպառումը Հայաստանում ունի հետևյալ կառուցվածքը:

<sup>1</sup> Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների

<sup>2</sup> Peto R. & Lopez A. Future worldwide health effects of current smoking patterns. In: Koop, C.E. ET AL. ed. *Critical issues in global health*. San Francisco, Jossey-Bass (2000)

Գրաֆիկ 1



Վերոհիշյալ փաստերը, ցավոք, բավարար չեն եղել, որպեսզի Հայաստանում ծխախոտամոլության դեմ պայքարին արվի պատշաճ կարևորություն, ինչի մասին վկայում է ծխախոտի արտադրությունը, տարածումը և սպառումը կանոնակարգող ներկա օրենսդրությունը։ Պետք է նշել, սակայն, որ առողջության պահպանմանն ուղղված Համաշխարհային շարժմանը ներկայում հաջողվել է ստեղծել այնպիսի միջավայր, որը բացառիկ հնարավորություն է ընձեռում Հայաստանին և այլ երկրների՝ վերականգնել կորցրածը ծխախոտամոլության դեմ պայքարի առումով և էական հաջողությունների հասնել ծխախոտի սպառումը կրճատելու հարցում։

## 2. Ծխելու տնտեսական հետևանքները

Ծխելու դեմ պայքարի կարևորության վերաբերյալ գոյություն ունեցող հիմնական հակափաստարկն այն է, որ, մասնավորապես Հայաստանում, ծխախոտային արդյու-

նաբերությունը հավակնում է հանդես գալ որպես տնտեսական աճ ապահովող և տնտեսության վրա ընդհանուր առմամբ դրական ազդեցություն ունեցող գործոն և դրա ծավալների կրճատման դեպքում երկիրը կրի բազմաթիվ սոցիալ - տնտեսական վնասներ։ Համաշխարհային գիտական միտքն այս հարցի շուրջ բացատրությունների և վերլուծությունների մի հսկա շտեմարան է ստեղծել, որը կարևոր նշանակություն ունի ծխախոտի դեմ պայքարի պատճառաբանվածությունը մատնացույց անելու հարցում։

Նշված հետևանքները գիտարկվում են երկու հիմնական տեսանկյուններից՝ առողջապահական և տնտեսագիտական։ Առողջապահական հետևանքները, կախված չինելով կոնկրետ երկրի սոցիալ-տնտեսական պայմաններից, կարիք չունեն ապացուցվելու յուրաքանչյուր առանձին երկրի համար։ Ժամանակակից գիտությունն արդեն ապացուցել է ծխելու կործանարար ազդեցությունը մարդու առողջության վրա և դրա դեմ ոչ ոք արդեն հանդես չի գալիս։

Խնդիրն այլ է ծխախոտի դեմ պայքարի տնտեսագիտական հետևանքների գնահատման ասպարեզում։ Հայաստանում ստեղծված իրավիճակը և ծխախոտի դեմ պայքարի հնարավոր ազդեցությունը գնահատելու համար նախ պետք է սահմանել, թե ինչ հիմնական ուղղություններով է իրականանում այդ ազդեցությունը։ Այդ ուղղությունները հետևյալն են՝

- Հանրային առողջություն.
- Կորսված ներուժ,
- պետական ծախսեր հանրային առողջության պահպանման վրա,

- աշխատանքի շուկա,
- արտաքին առևտուր,
- պետական եկամուտներ,
- աղքատություն:

Ծխախոտի սպառման ծավալների վրա հակածխախոտային քաղաքականության ազդեցությունը իրատեսորեն գնահատելու համար անհրաժեշտ է գիտենալ այդ քաղաքականության տարբեր լծակների հնարավոր ազդեցության մասշտաբները: Միջազգային փորձի ուսումնասիրությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ ծխախոտի սպառման վրա ազդելու ամենաարդյունավետ միջոցը նպատակառողջված հարկային քաղաքականության արդյունքում ծխախոտի գների բարձրացումն է: Տնտեսագետ Զալուպկայի հաշվարկների համաձայն եկամուտների ցածր մակարդակ ունեցող երկրների համար ծխախոտի նկատմամաբ պահանջարկի էլաստիկությունը -0.8 է, այսինքն Հայաստանի նման երկրներում ծխախոտի գնի 10% աճի պայմաններում կարելի է ակնկալել ծխախոտի պահանջարկի մինչև 8% նվազում<sup>3</sup>:

### 3. Հանրային առողջություն

Մի կողմ թողնելով հիվանդությունների և վաղաժամկետ մահերի բարոյական կողմը, խոսենք այն աշուելի ծխախորի մասին, որոնք իրականացվում են այդ ուղղությամբ: Համաշխարհային բանկի փորձագետների հաշվարկների համաձայն աշխարհում ծխախոտից ստացված բոլոր տեսակի եկամուտների և դրա հետևանքների վերացմանն ուղղված

բոլոր տեսակի ծախսերի հաշվեկշռը տարեկան հասնում է 200 մլրդ դոլար զուտ վնասի: Ընդ որում այդ վնասի 1/3-ը բաժին է ընկնում զարգացող երկրներին<sup>4</sup>:

Ծխախոտի հետևանքների վերացմանն ուղղված ծխսերում ընդգրկվել են ծխսեր, որոնք իրականացվել են առողջապահական այնպիսի ծառայությունների տրամադրման համար, որոնք անհրաժեշտ չեն լինի ծխախոտի չօգտագործման դեպքում: Գնահատվել են նաև աշխատունակության կորստի, հիվանդությունների աճի, հրդեհների հետևանքով պատճառված վնասների, աշխատանքի արտադրողականության նվազման և վաղ մահացության հետևանքով կորսված եկամուտների գործոնները:

Հայաստանի պարագայում վերոնշյալ գործոնների գնահատումը կապված է որոշակի դժվարությունների հետ: Այդ դժվարությունները հիմնականում վիճակագրական բնույթի են՝ պայմանավորված ծխելու հետևանքով աշխատունակության կորստի, արտադրողականության կրծատման և այլ նման գործոնների վերաբերյալ վիճակագրական տվյալների բացակայության հետ: Բացի այդ պետության կողմից այս կամ այն հիվանդության՝ պետպատվերի շրջանակներում ֆինանսավորման ծավալները չեն արտացոլում կատարված ծախսերի իրական պատկերը, քանի որ, ինչպես հայտնի է, պետական ծախսերից բացի պատկառելի ծախսեր են իրականացվում նաև հիվանդների կողմից: Այդ ծախսերի ծավալի գնահատման համար բավարար տվյալներ չունենալու պատճառով բավարարվենք պետական բյուջեում պետպատվերի Փինանսավորման համար նախատեսված գումար-

<sup>3</sup> Սանձելով համաճարակը. Երկրները և ծխախոտի դեմ պայքարի տնտեսագիտությունը: Հանաշխարհային բանկ, 1999

<sup>4</sup> Основные факты про табак. Второе издание. – Серия „Профилактика алкогольных, наркотических и табачных проблем.“ – 1999. 36 стр.

## **Ների վերլուծությամբ:**

### **Աղյուսակ 1**

| Հիվանդություն                           | Դեպքերի թիվը<br>2002թ. | Իատկացված<br>գումարը, հազ.<br>դրամ, 2002թ. | Դեպքերի<br>թիվը<br>2003թ. | Իատկացված<br>գումարը,<br>հազ. դրամ,<br>2003թ. |
|---|------------------------|--|---------------------------|---|
| Արտամկանի իշեմիկ<br>հիվանդություններ    | 2884                   | 133 270.8                                  | 3395                      | 200 501.5                                     |
| Հնչառական ուղիմների<br>հիվանդություններ | 2161                   | 99 761.0                                   | 2358                      | 148 759.8                                     |
| Թոքի քաղցկեղ                            | 143                    | 8 676.5                                    | 156                       | 12 380.9                                      |
| Բերանի խոռոչի<br>քաղցկեղ                | 430                    | 23 895.7                                   | 467                       | 34 204.2                                      |
| Կոկորդի քաղցկեղ                         | 503                    | 32 470.8                                   | 518                       | 45 990.6                                      |
| Ինդամներ                                |                        | 298 074.8                                  |                           | 441 837.0                                     |

**Աղյուսակ 1-ում բերված տվյալները նկարագրում են այն հիվանդությունների բուժմանն ուղղված ծախսերը, որոնց առաջացումը մեծապես պայմանավորված է ծխելով:**

Ունենալով գիտականորեն հիմնավորված տվյալներ այն մասին, թե տվյալ հիվանդությունների որ մասն է բաժին ընկնում հենց ծխախոտի օգտագործման հետևանքներին՝ կարելի է հաշվարկել ծխելու հետևանքով պետության կատարած ծախքերը հանրային առողջության պահպանման, ավելի ճիշտ, ծխելու հետևանքների վերացման ուղղությամբ:

Այսպես՝ 2000թ. տվյալների համաձայն ընդհանուր մահացության 33%-ը բաժին է ընկնում հիվանդություններին, որոնց ծագումն անմիջականորեն կապված է ծխելու հետ: Ավելին, չնչառական ուղիների հիվանդություններից մահացության 71.3%-ը ծխելու անմիջական հետևանք է: Այդ ցուցանիշը սրտանոթային հիվանդությունների դեպքում կազմում է 30%, թոքերի քաղցկեղի դեպքում՝ 92.3%, այլ քաղցկեղների դեպքում՝ 48%<sup>5</sup>:

**Այսպիսով՝ կարելի է գնահատել, թե Հայաստանի**

**բյուջեն որքան ուղղակի հատկացումներ է կատարում առողջապահության ոլորտին ծխելու հետևանքների վերացման նպատակով:**

### **Աղյուսակ 2**

| Հիվանդություն                              | ՀՅ պետական<br>բյուջեվ փաստացի<br>հատկացված<br>գումարը, հազ. դրամ,<br>2003թ. | Հիվանդության<br>ընդհանուր<br>պատճառների մեջ<br>ծխելու հետևանքով<br>առաջացածների<br>բաժինը | Ծխելու<br>հետևանքների<br>վերացման համար<br>ծախսված<br>գումարները<br>(գնահատական) |
|--|---|---|--|
| Արտամկանի իշեմիկ<br>հիվանդություններ       | 200 501.50  | 30.0%   | 60 150.45  |
| Հնչառական<br>ուղիմների<br>հիվանդություններ | 148 759.80  | 71.3%   | 106 065.70   |
| Թոքի քաղցկեղ                               | 12 380.90   | 92.3%   | 11 427.57  |
| Բերանի խոռոչի<br>քաղցկեղ                   | 34 204.20   | 48.0%   | 16 418.02  |
| Կոկորդի քաղցկեղ                            | 45 990.60   | 48.0%   | 22 075.49  |
| Ինդամներ                                   | 441 837.00  |   | 216 137.30   |

**Այսպիսով, կարելի է ամփոփել, որ միայն պետպատվերի շրջանակներում 2003 թվականին ՀՀ պետական բյուջեից ծախսվել է մոտ 220 միլիոն դրամ՝ ծխախոտի առողջապահական հետևանքների վերացման նպատակով:**

## **4. Աշխատանքի շուրջ**

**Աշխատանքի շուրջայի վրա ծխախոտի արդյունաբերության ունեցած ազդեցությունը կամ, ավելի ճիշտ, ծխելու դեմ պայքարի հնարավոր հետևանքներն այդ շուրջայի վրա գնահատելուց առաջ անհրաժեշտ է կատարել մի կարևոր վերապահում, այն է՝ ծխելու դեմ նույնիսկ ամենաարդյունավետ պայքարի դեպքում դժվար է խոսել ծխախոտային արդյունաբերության ծավալների կրծատման մասին: Խոսքն, ավելի շուտ, վերաբերում է արտադրության ծավալների աճի տեմպի կրծատմանը: Սակայն, նույնիսկ արդյունաբերության ծավալների կրծատման դեպքում հակածիստային քաղա-**

<sup>5</sup> Հետազոտությունն իրականացված է 35-69 տարիքային խնդիր տղամարդկանց շրջանում

քականության քննադատությունը պատճառաբանված չէ հետևյալ պատճառներով. սպառողների դրամական միջոցները ծխախոտի գնման համար չծախսվելու դեպքում ուղղորդվում են այլ ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը, որոնց ստեղծման համար նույնպես աշխատուժ է անհրաժեշտ: Այլ խոսքով, տրամաբանական է ակնկալել, որ ծխախոտային արդյունաբերությունում զբաղված աշխատուժը պետք է որ ուղղորդվի արդյունաբերության այլ ճյուղեր: Այս երկույթն առավել հստակ է հենց Հայաստանի դեպքում, քանի որ աղքատության բարձր ցուցանիշը ունենալու պարագայում կամեծ հավանականություն, որ ծխելուց հրաժարվելու դեպքում բնակչության դրամական միջոցները կուղղորդվեն, ասենք, սննդի վրա, որի շուկան հիմնականում զբաղեցված է Հայրենական արտադրության ապրանքներով: Սա կարող է ունենալ երկակի ազդեցություն, մի կողմից ապահովելով դրամական միջոցների ուղղորդումը Հայրենական արտադրության այլ ճյուղերի արտադրանքին (ծխախոտի դեպքում ներքին սպառման ավելի քան 60%-ը բաժին է ընկնում ներմուծված սիգարետներին), մյուս կողմից մեծացնելով պահանջարկը հենց գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ, որի առաջնային առաջարկը ստեղծվում է գյուղացիական տնտեսությունների կողմից:

Ավելին, ծխախոտային արդյունաբերությունը ողջ աշխարհում ընդհանրապես, և Հայաստանում մասնավորապես հանդիսանում է մեքենայացման առավել բարձր մակարդակ ունեցող ճյուղերից մեկը: Հետևաբար ծխախոտի վրա սպառվող դրամական միջոցներն այլ արտադրանքի վրա սպառվելու դեպքում ավելի շատ աշխատատեղ կարող են ստեղծել, քանի որ այլ արտադրություններում ավելի ցածր մեքենայացման

մակարդակի պատճառով միավոր արտադրանքի ստեղծման համար անհրաժեշտ են ավելի շատ մարդկային ռեսուրսներ:

Ինչպես նշվեց վերևում, Հայաստանում ծխախոտի սպառման մոտ 60%-ը բաժին է ընկնում ներմուծմանը: Սա նշանակում է, որ ծխախոտային արդյունաբերության արտադրանքի նկատմամբ պահանջարկի հնարավոր կրծատման պարագայում էլ այդ ազդեցությունը մեղմացվում է նշված համամասնությամբ:

Ավելի լավ պատկերացնելու համար զբաղվածության վրա ծխախոտային արդյունաբերության կրծատման ազդեցությունը, այն դիտարկենք Հայաստանի օրինակի վրա:

Հայաստանում ծխախոտի արդյունաբերության մեջ ներգրավված աշխատուժը մոտավոր հաշվարկների համաձայն կազմում է ավելի քան 20 հազար մարդ, որից ավելի քան 17 հազարը ծխախոտային կուլտուրաներ մշակող գյուղացիներն են:

### Գյուղատնտեսություն

Նույնիսկ ծխախոտային կուլտուրաների մշակման վրա մասնագիտացված երկրներում ծխախոտի համար հատկացված հողերի մակերեսը չի գերազանցում ընդհանուր մշակվող հողերի 1.5%-ը: Միայն երկու երկրներ՝ Մալավին և Զիմբաբվեն, որոնց տնտեսությունը կախում ունի ծխախոտի մշակման ճյուղից, այդ նպատակների համար հատկացրել են մշակվող հողերի 6%-ը: Հայաստանում այս հարաբերակցությունը 2000 թվականին կազմել է մոտ 0.8%:

Ծխախոտային կուլտուրաների մշակումը համեմատաբար աշխատատար է: Հայաստանում ծխախոտային կու-

տուրաների մշակումը որոշակի գրավչություն ունի գյուղացիների համար թերևս այն պատճառով, որ այստեղ ծխախոտային կուտուրաների միակ գնորդ ձեռնարկությունը կանխավճարային պայմաններով է աշխատում գյուղացիների հետ: Մյուս կողմից, նման պայմաններ արդեն առաջարկվում են շատ այլ գյուղատնտեսական ապրանքների համար, որոնց շուկան նույնպես հետզհետե մեծանում է:

Հայաստանում ծխախոտային կուտուրաների մշակման մեջ ներգրավված են մոտավորապես 17 հազար գյուղացիներ<sup>6</sup>: Եթե ծխախոտի գների 10% բարձրացման դեպքում ակնկալելու լինենք սպառման նույնիսկ 8% անկում<sup>7</sup>, ապա չի կարելի միանաշանակ պնդել, որ անկման այս չափը կարող է համամասնորեն նույնքան գյուղացիների գործազրկության պատճառ հանդիսանալ: Այս համոզմունքը պատճառաբանվում է այն փաստով, որ գյուղացիների համար մշակվող կուտուրաների փոփոխությունը բավական տարածված և կիրառելի պրակտիկա է:

## Այլ ոլորտներ


Գյուղատնտեսությունից բացի Հայաստանի ծխախոտի արդյունաբերության մեջ ընդգրկված է ավելի քան 3000 մարդ, ներառյալ մանրածախ և մեծածախ առևտուրը<sup>8</sup>: Նույնիսկ այնպիսի խիստ տեսական վերապահման դեպքում, թե Հակածիախոտային քաղաքականության խստացման դեպքում հնարավոր կլինի հասնել ծխախոտի նկատմամաբ պահանջարկի 8% անկման և այդ անկումը համամասնորեն

կազդի ծխախոտի արդյունաբերությունում գրաղված աշխատումների կրծատմանը, ակնհայտ է, որ նման կրծատումը աննշան բաժին է կազմում ընդհանուր գրաղվածների թվում:

## 5. Արտաքին առևտուր

Հայաստանում արտաքին առևտուրը ծխախոտի արտադրանքով շարունակում է ունենալ բացասական հաշվեկշռ, ընդ որում ներմուծման ծավալները գերազանցում են արտահանման ծավալները տասնյակ անգամներ:

Գրաֆիկ 2. Սիգարետների արտահանումը և ներմուծումը (ԱՄՆ դրույ)



Քանակական առումով սիգարետների արտահանման և ներմուծման տարբերությունն ավելի քիչ է, քանի որ ներմուծվող սիգարետները հիմնականում ավելի թանկ են:

Ինչպես կարելի է դատել գրաֆիկ 2-ի տվյալներից, բացասական հաշվեկշռը հետագայում ևս մեծացման միտում ունի:

<sup>6</sup> 2000 թ. տվյալներով

<sup>7</sup> տես նախաբանը

<sup>8</sup> աշխատուժի հաշվարկը ներառում է իրական աշխատուժի քանակը՝ բերված 100% գրաղվածության

Որպես հետևանք ծխախոտի սպառման մեծ չափերի և դրա ավելացման միտումների արդյունքում հայկական սպառողը տարեկան մոտ 25-30 մլն ԱՄՆ դոլար վճարում է արտասահմանյան արտադրողներին՝ այդ գումարը դուրս հանելով Հայաստանից: Համեմատության համար ասենք, որ այս գումարայի կուտակային չափը 1995թ.-ից հաշված համեմատելի է Արժույթի միջազգային հիմնադրամից նույն ժամանակահատվածում ստացված փոխառությունների կուտակային գումարի հետ<sup>9</sup>:

Այսպիսով, Հայաստանի համար տնտեսապես շահավետ և պատճառաբանված կլիներ ապահովել առկա բացասական հաշվեկշռի կրճատում, ինչին մասսամբ կարելի է հասնել սիդրետների արտահանման ծավալների մեծացմամբ, մասսամբ էլ, ծխախոտի նկատմամբ համընդհանուր պահանջարկի կրճատմամբ և, հետևաբար, ներմուծման ծավալների կրճատմամբ: Հանրային առողջության տեսակներում այս երկրորդ մոտեցումն ավելի ընդունելի կարելի է համարել:

## 6. Պետական եկամուտներ

Պետական եկամուտները թերևս դիտարկվող հարցի համատեքստում ամենաշատ շահարկվող թեմաներից են: Պատճառն այն է, որ հակածխախոտային պայքարի ամենաարդյունավետ միջոց, ինչպես արդեն նշվել է նախաբանում, համարվում է հենց գնային մեխանիզմը: Ծխախոտի սպառման ծավալների կրճատման ամենահեշտ և տնտեսապես

շահավետ եղանակը ծխախոտի գների բարձրացումն է, որին կարելի է հասնել հարկադրույքների բարձրացման միջոցով: Այս մեխանիզմի արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծխախոտի արտադրանքի նկատմամբ պահանջարկը էլաստիկ չէ, այսինքն այդ ապրանքների գնի միավոր բարձրացումը պատճառ է հանգիսանում պահանջարկի ավելի պակաս կրճատման: Ծխախոտի պարագայում այս հանգամանքը կապված է ծխախոտում պարունակվող նիկոտինի նկատմամբ կախվածության առաջացմամբ, որի պատճառով ծխողը դժվարությամբ է կարողանում հրաժարվել վտանգավոր այդ սովորությունից:

Վերը նշվածի տնտեսագիտական մեկնաբանությունը հետեւյալն է: Հարկերի բարձրացման դեպքում պահանջարկի կրճատման տեսական հնարավորությունը չի հասնի այնպիսի չափերի, որպեսզի հարկերից առաջացող գումարների բացարձակ մեծությունը նվազի:

Ասվածի ճշմարտացիությունը ստուգելու համար դիտարկենք Հայաստանի ծխախոտի շուկան և պետական բյուջե մուտքագրվող գումարները 2001թ<sup>10</sup>. դրությամբ:

Նախ ծխախոտի շուկայի մասին: Համաձայն մեր հաշվարկների 2001թ. ընթացքում ներքին շուկայում սպառվել է մոտավորապես 163 մլն տուսի միգարես՝ մոտ 47 մլրդ դրամ ընդհանուր գումարով: Շուկայի կառուցվածքը և հարկման սահմանված չափերը ներկայացված են հետեւյալ աղյուսակում:

<sup>10</sup> Դիտարկման համար 2001թ. ընտրելու փաստը պատճառաբանված է նրանով, որ առկա վիճակագրական տվյալները առավել լիարժեք և ամբողջական են նշված տարվա համար, մասնավորապես սիգարետների սպառման շուկայի կառուցվածքի վերաբերյալ մանրակրկիտ տվյալների առկայության առունուվ:

<sup>9</sup> սեղ “Recognising Threat and Assuming Responsibility: Tobacco Control in Armenia”. Dr. Sevak Lalayan. www.policy.hu/lalayan

**Աղյուսակ 3**

| Ծագումը և տեսակը                                   | Բաժինը<br>շուկայում | Նարկման չափը ըստ գործող<br>օրենսդրության (ԱՄՆ դոլար<br>1000 հատի դիմաց) | Կշռված<br>միջին գինը |
|--|---------------------|---|----------------------|
| Ներմուծված ֆիլտրով<br>սիզարետներ                   | 61.50%              | 11.0  | 331.01               |
| Ներմուծված<br>սիզարետներ առանց<br>ֆիլտրի           | 1.10%               | 6.0   | 94.41                |
| Տեղական<br>արտադրության ֆիլտրով<br>սիզարետներ      | 27.20%              | 8.0   | 246.51               |
| Տեղական<br>արտադրության առանց<br>ֆիլտրի սիզարետներ | 10.20%              | 3.5   | 114.70               |

**Հայաստանում ծխախոտային ապրանքների հարկումը տարբերվում է այլ ապրանքների հարկման մեջողից. ավելացված արժեքի, ակցիզային հարկերը և մաքսատուրքը միացվել են մեկ միասնական վճարում։ Ունենալով ծխախոտի սպառման շուկայի առկա կառուցվածքը և կատարելով ոչ բարդ հաշվարկ՝ ստանում ենք, որ հարկման միջինացված դրույքաչափը կազմում է մեկ տուփ ծխախոտի միջին կշռված գնի (որը 2001թ. համար հավասար էր 288 դրամի) 35.11%-ը։**

Խնդիր դնելով հասնել միջին գնի 10% բարձրացման և առաջարկելով ծխախոտային ապրանքների հարկման ներքո-հիշյալ մեխանիզմը՝ փորձենք գնահատել դրա հնարավոր հետևանքները ՀՀ պետրյուջեի տեսանկյունից։


**Աղյուսակ 4**

| Ծագումը և տեսակը                                | Նարկման առաջարկվող<br>չափը (ԱՄՆ դոլար 1000<br>հատի դիմաց) | Նարկի<br>բաժինը գնում | Կշռված միջին<br>գինը |
|---|---|-----------------------|----------------------|
| Ներմուծված ֆիլտրով<br>սիզարետներ                | 12.7  | 42.59%                | 331.01               |
| Ներմուծված սիզարետներ<br>առանց ֆիլտրի           | 7   | 82.30%                | 94.41                |
| Տեղական արտադրության<br>ֆիլտրով սիզարետներ      | 12.7  | 57.19%                | 246.51               |
| Տեղական արտադրության<br>առանց ֆիլտրի սիզարետներ | 7   | 67.74%                | 114.70               |

Այս դեպքում կունենանք մոտ 317 ՀՀ դրամի հասնող մեկ տուփ սիզարետի միջին կշռված գին, որում հարկերի բաժինը կհասնի մոտ 45 տոկոսի։ Անցնելով բացարձակ թվերի կատանանք, որ ծխախոտային ապրանքների հարկման տոկոսադրույքը բարձրանում է 28.4%-ով։

**Այժմ անդրադառնանք բյուջետային եկամուտներին։**

Գրաֆիկ 3. Բյուջետային եկամուտները՝ ծխախոտի հարկումից ՀՀ դրամով



Ինչպես երևում է գրաֆիկ 3-ից, ՀՀ պետական բյուջեի մուտքերը տարեցտարի շարունակական աճ են ունենում և 2001 թվականին դրանք կազմել են մոտ 13.7 մլրդ դրամ։

Պատկերացնենք, թե համաձայն այս սցենարի ծխախոտի միջին գինն ավելացել է 10%-ով, որի հետևանքով սպառումը կրճատվել է հնարավոր առավելագույն չափով, այսինքն 8%-ով։ Հաշվարկները ցույց են տալիս, որ այս դեպքում պետական բյուջեն 2001 թ.-ին կստանար մոտավորապես 8.5 մլն Ա.ՍՆ դրամին հավասար գումարով ավելի շատ եկամուտներ, քան ստացել է իրականում։

Պահանջարկի էլաստիկության ավելի մեղմ գնահատա-

կանների դեպքում (երբ էլաստիկությունն ավելի ցածր է սցենարում օգտագործվածից) կարելի է ակնկալել հարկային եկամուտների շատ ավելի էական ներհոսք:

Միջազգային պրակտիկան նույնպես հավաստում է, որ դեռևս ոչ մի երկրում, որտեղ ավելացվել են ծխախոտային ապրանքների հարկերը, բյուջետային կորուստներ չեն արձանագրվել:

## 7. Աղքատություն

Ծխելու դեմ պայքարում առանձնահատուկ տեղ ունի ծխելու և աղքատության փոխկապվածությունը: Աղքատության հարցը, լինելով Հայաստանի և շատ այլ երկրների արդի ամենացավոտ խնդիրներից մեկը, կարևորվում է նաև Հակածխախոտային շարժման համար հիմք հանդիսացող գիտական հոգվածներում և վերլուծություններում, քանի որ աղքատության մակարդակի և ծխելու նկատմամբ հակվածության միջև հիմնականում գոյություն ունի դրական կորելյացիա: Զնայած, համաձայն մեր հաշվարկների, Հայաստանում այդ կորելյացիան թույլ է (թերևս այն պատճառով, որ Հայաստանում աղքատությունը դեռ չի նշանակում կրթական ցածր մակարդակ), ամեն դեպքում «աղքատություն-ծխել» կապը մեր երկրում ևս արդիականություն ունեցող խնդիր է, քանի որ, օրինակ՝ ծխախոտի հարկերի բարձրացման հարցին շատերը բացասաբար են վերաբերվում՝ համարելով, որ գների բարձրացումն առաջինը հարվածելու է աղքատ խավի գրպանին և վատթարացնելու առանց այն էլ ծանր սոցիալական իրավիճակը:

Վերջին պնդման համար լավագույն հակափաստարկ է

այն իրողությունը, որ ամենաաղքատ խավերի մոտ ծխախոտի նկատմամբ պահանջարկի էլաստիկությունն առավել բարձր է: Այսինքն գնային մեխանիզմների միջոցով ծխախոտային համաճարակը զավելու քաղաքականությունն ամենաարդյունավետն է համարվում հենց աղքատների շրջանակներում:

Հարցի մյուս կողմն աղքատների համար ծխելու այլընտրանքային արժեքն է, այսինքն ծխելու հետևանքով չսպառված այն կալորիխաների և ապրանքների արժեքը, որոնք աղքատ խավի համար էական, երբեմն կենսական անհրաժեշտություն ունեն: Այսին՝ Հայաստանի օրինակով կարելի է ուսումնասիրել սպառման կառուցվածքը հասարակության տարբեր դեցիլային խմբերում, որտեղ, որպես կանոն, էական ծավալների են հասնում մեկ չնչի հաշվով ծխախոտի վրա կատարված միջին ամսական ծախսերը:

### Աղյուսակ 5<sup>11</sup>

| Ռեզիլային խմբեր                                       | 1     | 2     | 3     | 4     | 5     | 6     | 7     | 8     | 9     | 10    |
|---|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Սպառողական ծախսեր, ՀՀ դրամ                            | 3330  | 5310  | 6661  | 7992  | 9352  | 10965 | 13022 | 15719 | 20234 | 37645 |
| այդ թվում   |       |       |       |       |       |       |       |       |       |       |
| սնունդ  | 2676  | 4119  | 5091  | 5947  | 6663  | 7783  | 8925  | 10396 | 12261 | 18845 |
| ծխախոտ  | 202   | 336   | 336   | 458   | 568   | 621   | 815   | 913   | 1097  | 1392  |
| Ծխախոտի վրա կատարված ծխսերի բաժինը ընդհանուրի մեջ     | 6.07% | 6.33% | 5.04% | 5.73% | 6.07% | 5.66% | 6.26% | 5.81% | 5.42% | 3.70% |
| Ծխախոտի վրա կատարված ծխսերի բաժինը սնունդի ծխսերի մեջ | 7.54% | 8.16% | 6.60% | 7.70% | 8.52% | 7.98% | 9.13% | 8.78% | 8.95% | 7.39% |

Աղքատության հաշվարկը Հայաստանում իրականացվում է մեկ չնչին անհրաժեշտ օրական 2100 կալորիխաների ապահովման համար որոշակի աղքանքային զամբյուղի գինը բազմապատկելով այլ աղքանքների և ծառայությունների


<sup>11</sup> Աղյուրը՝ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2002» Ազգային վիճակագրական ծառայություն

Ճեռքբերման համար սահմանված որոշակի գործակցով և ամսվա օրերի թվով: 2001 թվականի համար այս ցուցանիշը սահմանված էր 12019 դրամ: Մայրահեղ աղքատության մակարդակը բնորոշվում է առանց նշված գործակցի հաշվի առնման: Աղքատության հաշվարկման և գնահատման իմաստը կայանում է նրանում, որ նշված 12019 դրամ գումարն անհրաժեշտ է մեկ մարդուն մեկ ամսվա ընթացքում իր կենսական կարիքները (ինչպես անունդի, այնպես էլ այլ անհրաժեշտ ապրանքների ու ծառայությունների առումով) բավարարելու համար: 2100 կալորիաների հաշվարկում, բնականաբար, ծխախոտը չի ընդգրկվում և չի կարող ընդգրկվել, քանի որ, մեզմ ասած, օգտակար հատկություններ չունի: Այնուամենայնիվ, աղյուսակ 5-ից երեսում է, որ բնակչության աղքատ խավերը, որոնք, ի դեպ, զբաղեցնում են 1-5 դեցիլները, իրենց ծախսերի մոտ 7 տոկոսն իրականացնում են ծխախոտ ձեռք բերելու նպատակով, ինչն, ըստ աղքատության սահմանման, չի հանդիսանում նրանց բարեկեցության բարձրացման կամ բնութագրման գործոն:

Աղքատության մակարդակի հաշվարկի ժամանակ տրամաբանական հաջորդ գործողությունը ծխախոտի վրա կատարված ծախսերի բացառումն է: Նման հաշվարկն, իհարկե, չի կարող արտացոլել աղքատության պաշտոնական մակարդակը և ափելի շուտ ունի գուտ տեսական նշանակություն:

Նման տեսական հաշվարկի հետևանքներն ակնառու դարձնելու համար այն ներկայացնենք բնակչության դեցիլային խմբերի ոչ կուտակայի ծախսերի կորի տեղաշարժի տեսքով:

Գրաֆիկ 4



Գրաֆիկ 5-ում պատկերված հոծ կորագիծը ներկայացնում է բնակչության ոչ կուտակային միջին ամսական ծախսերն՝ ըստ դեցիլային խմբերի, առանց հաշվի առնելու ծխախոտի ձեռքբերմանն ուղղված ծախսերը (այսինքն ներկայացվում է աղքատության մակարդակի գնահատման ոչ թե պաշտոնական, այլ «տրամաբանական» եղանակը): Կորի այն կետերը, որոնք գտնվում են վերին հորիզոնական կետագծից ներքև, բնութագրում են աղքատության մակարդակից ցածր բնակչությունը, իսկ ստորին հորիզոնական կետագծից ցածր գտնվում են ծայրահեղ աղքատությունը:

Այժմ ենթադրենք, թե այն դրամական միջոցները, որոնք ուղղվում էին ծխախոտի ձեռքբերմանը և մեր տեսական հաշվարկից դուրս էին մնացել, այժմ կարող են ծախսվել այլ, օգտակար հատկանիշներ ունեցող կամ կալորիական մննդի ձեռք բերման նպատակով: Համաձայն մեր կատարած վերապահման, այս դեպքում այդ ծախսերը կմասնակցեն աղքա-

սության մակարադակի գնահատման հաշվարկներում և դրա արդյունքում գրաֆիկ 5-ի կորը կտեղաշարժվի աջ՝ գրավելով կետագծային կորի տեղը: Կորի վրա գտնվող այն հատվածները, որոնք կորի տեղաշարժման արդյունքում կհատեն աղքատության և ծայրահեղ աղքատության հորիզոնականները, բնութագրում են բնակչության այն հատվածները, որոնք տեսականորեն կդադրեն աղքատ համարվելուց: Համաձայն մեր հաշվարկների՝ այդ մարդկանց քանակը համապատասխանաբար կազմում է 220 հազար և 52 հազար մարդ աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակների համար: Ծխախոտի միջին գնի 10% բարձրացման դեպքում այդ թվերը համապատասխանաբար կհավասարվեն 67 հազարի և 16 հազարի:

Հասկանալով, որ վերը նշված հաշվարկն իրենից ներկայացնում է զուտ հիպոթետիկ իրավիճակ և բացի այդ աղքատության պաշտոնական մակարդակի փոփոխություն չի ենթադրում, այնուամենայնիվ նշենք, որ այն ունի իր տրամաբանությունը և բացահայտում է ծխախոտի սպառման բացասական ազդեցությունը հատկապես աղքատ խավերի համար՝ կորցրած հնարավորությունների իմաստով: Այլ կերպ ասած, աղքատների համար մեկ տուփ սիգարետն ունի իր այլընտրանքային արժեքը, որը կարող է լինել հավելյալ կալորիաներ ընտանիքի անդամների, այդ թվում՝ երեխաների համար, դասագրքեր, զգեստներ, դպրոցական, պայուսակներ և այլն<sup>12</sup>:

## 8. Եզրակացություններ

Ծխելու դեմ պայքարի քաղաքականության որդեգրման անհրաժեշտությունն ապացուցելու նպատակով աշխարհի տարբեր երկրներում իրականացվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, վերլուծություններ, գիտական հետազոտություններ: Այս բոլորի արդյունքում կուտակվել են բազմաթիվ ապացույցներ, որոնք միանշանակ հաստատում են ծխելու վնասակար ազդեցությունը և՝ տնտեսական, և՝ առողջական և՛ բնապահպանական և այլ ոլորտներում:

Սույն վերլուծությունում փորձել ենք քննարկել Հայաստանում ծխելու հիմնական տնտեսական հետևանքները: Վերլուծության արդյունքները հավաստում են, որ դիտարկվող ոլոտներից և ոչ մեկում չի կարելի ակնկալել բացասական հետևանքներ տնտեսության վրա: Ավելին, մի շարք դեպքերում առկա են տնտեսության վրա դրական ազդեցության բացահայտ հնարավորություններ:

Այս համատեքստում առավել արդյունավետ կարելի է համարել ծխախոտի հարկման մեխանիզմների միջոցով ծխախոտի գնի ավելացումը, որը մի կողմից կապահովի ծխախոտի սպառման կրծատում՝ առավելագույն չափով, մյուս կողմից հավելյալ եկամուտներ կբերի պետական բյուջե:

Ծխախոտի դեմ պայքարի առումով Հայաստանն, ինչ խոսք, դեռ երկար ճանապարհ ունի անցնելու:

<sup>12</sup> Հայաստանում ծխելու և աղքատության վերաբերյալ մանրամասն վերլուծությունը կարելի է գտնել [www.policy.hu/amirjanyan](http://www.policy.hu/amirjanyan) ինտերնետ էջում